**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի /հայտերի բացման նիստի/

ք. Երևան

«25» սեպտեմբերի 2017թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նիստը նախագահող՝*

**Սարգիս Արմենակյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արմինե Ալիխանյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Աղավնի Բուդույան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Մհմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

Նիստից բացակայում էր՝

**Էլլադա Արզաքանյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

Համաձայն ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի՝ նիստը նախագահում էր Սարգիս Արմենակյանը:

**1. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

«Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ի, «Էլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի, «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի, «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի, «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի, «Էկոմիքս» ՍՊԸ-ի, «Վարմէքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

2.1 «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

2.2 «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում /հայտում առկա փաստաթղթերում/ արձանագրվել է, որ

ա) գնանշման հարցմանը մասնակցելու դիմումում (Հավելված 1) չափաբաժինների համարները թերի են լրացված,

բ) որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությունը (Հավելված 3) ներկայացված չէ հրավերով սահմանված հավելվածին համապատասխան,

գ) հայտում ներառված փաստաթղթերը ստորագրված են լիազորված անձի կողմից, սակայն հայտով ներկայացված վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթի՝ լիազորագրիի ժամկետը լրացած է, ինչպես նաև այն հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ,

դ) տուժանքի մասին համաձայնագրին (Հավելված 10) կից վճարման պահանջագրում Շահառուի հաշվի համարը /հշ.N/ շահառուի կողմից՝ հրավերով նախապես լրացվել է 900005000741, սակայն մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթում լրացված է 900005000758, ինչպես նաև գործարքի /վճարման/ նպատակը շահառուի կողմից՝ հրավերով նախապես լրացվել է՝ Հայտի ապահովում, մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթում լրացված է՝ հայտի ապահովում՝ Պայմանագրի կատարման ապահովում:

2.3 «Էլիպս Ձիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում /հայտում առկա փաստաթղթերում/ արձանագրվել է, որ հայտի ապահովման չափը գերազանցում է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսը:

2.4 «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում /հայտում առկա փաստաթղթերում/ արձանագրվել է, որ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումում (Հավելված 1) չափաբաժինների համարները թերի են լրացված:

2.5 «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում /հայտում առկա փաստաթղթերում/ արձանագրվել է, որ

ա) մասնակցի իրական շահառուների մասին տվյալներում (Հավելված 2.1) նշված չէ փաստաթղթի տեսակը,

բ) որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությունը (Հավելված 3) ներկայացված չէ հրավերով սահմանված հավելվածին համապատասխան,

գ) գնային առաջարկում (Հավելված 5) ԱԱՀ-ն տառերով չի համապատասխանում ԱԱՀ-ին թվերով,

դ) հայտի ապահովման չափը գերազանցում է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսը:

2.6 «Էկոմիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում /հայտում առկա փաստաթղթերում/ արձանագրվել է, որ հայտի ապահովման չափը գերազանցում է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսը:

2.7 «Վարմէքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում /հայտում առկա փաստաթղթերում/ արձանագրվել է, որ տուժանքի մասին համաձայնագրի (Հավելված 10) ամսաթիվը լրացված չէ մասնակցի կողմից, սակայն փաստաթղթի վրա արտատպված էլեկտրոնային թվային ստորագրության ամսաթիվը տեսանելի է:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**3. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4. Մասնակիցների առաջարկած գներն են.

| Հ/Հ | Չափաբաժնի անվանումը | «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ | | | «Էլիթս Ջի Էյ» ՍՊԸ | | | «Կոմպմարկետ» ՍՊԸ | | | «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Ֆլեշ հիշողություն, 32GB | 162 917 | 32 583 | 195 500 | | | | 149 500 | 29 900 | 179 400 | 119 025 | 23 805 | 142 830 |
| 2 | Ցանցային բաժանարար /սվիչ 8 պորտ/ | 132 708 | 26 542 | 159 250 | | | | 127 750 | 25 550 | 153 300 | 137 375 | 27 475 | 164 850 |
| 3 | Սնուցման մարտկոց | 987 500 | 197 500 | 1 185 000 | | | | 750 000 | 150 000 | 900 000 | 768 750 | 153 750 | 922 500 |
| 4 | Սնուցման բլոկ | 466 667 | 93 333 | 560 000 | | | | 360 000 | 72 000 | 432 000 | | | |
| 5 | Պլաստիկ քարտ | 150 000 | 30 000 | 180 000 | 88 545 | 17 709 | 106 254 | | | | | | |
| 6 | Մալուխ՝ համակարգչի, UTP cable 6 level | | | | | | | | | | | | |

| Հ/Հ | Չափաբաժնի անվանումը | «Նորմա-պլյուս» ՍՊԸ | | | «Էկոմիքս» ՍՊԸ | | | «Վարձէքս» ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Ֆլեշ հիշողություն, 32GB | 105 800 | 21 160 | 126 960 | | | | | | |
| 2 | Ցանցային բաժանարար /սվիչ 8 պորտ/ | 132 300 | 26 460 | 158 760 | | | | | | |
| 3 | Սնուցման մարտկոց | 1 031 250 | 206 250 | 1 237 500 | | | | 705 000 | 141 000 | 846 000 |
| 4 | Սնուցման բլոկ | | | | | | | | | |
| 5 | Պլաստիկ քարտ | | | | | | | | | |
| 6 | Մալուխ՝ համակարգչի, UTP cable 6 level | | | | 98 641,67 | 19 728,33 | 118 370 | | | |

**Հանձնաժողովը որոշեց.**

- նիստը կասեցնել, գրությամբ դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատման վերաբերյալ լիազորված մարմնի դիրքորոշումը ստանալու նպատակով,
- հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ֆինանսների նախարարությունից պատասխան գրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 16:00-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի նիստը

Նախագահող՝ Սարգիս Արմենակյան

Անդամներ՝

Կարեն Մելքոնյան

Արմինե Ալիխանյան

Աղավնի Բուդոյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան